

Թել չկարեն: Վասն որոյ յորդոր կկարգամք մեր Ազգայնոց, որպէս զի բարեհաճին և փութան ըստ կարեաց ձեռն օգնութեան կարկառել այն ողորմելի եղբարց, որք բաղդին ձեռքը խաղալիք դարձած են, և քանի քանի անգամներ բաւական և մեծամեծ վնասներով ճնշուած կը տողորին ի դրունս անըմբերելի նեղութեանց և թշուառութեանց. ուրեմն սիրելի Ազգայինք, փութացէք և օգնեցէք նոցա, և բարոյապէս մխիթարելով վերականգնեցէք թէ՛ զնոսա և թէ՛ նոցա Եկեղեցին և ուսումնաբանը, որպէս զի թող մեր կրկնակի պարտքն ըր մեծապանծ փառաւորուն՝ յաւէտ զգացած և դիտացած լինելով սիրել մեր եղբայրները, և ի պահանջակի կարեկից գտանել նոցին վիճակաց, օգնելով թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս:

ԳՐԱՏՈՒՆ Ի ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆ.

Պ. Յ. Տէր-Արքայապետ բաւական հարուստ գրատուն բացած է ի Նոր-Նախիջևան, ուր նաև ի Ս. Պօլիս, ի Փարիզ, ի Վենետիկ, ի Վեննայ, ի Զմիւռնիա և յերուսաղէմ տպագրեալ գրեանց մեծ մաս կը գտնուին և կը վաճառուին:

Նոյնպէս նոյն Պարոն կիմացնէ յեւ Էրեբունի, որ գրասենեկին մօտ տպարան բանալոյ և մի լրագիր հրատարակելոյ համար հետամուտ է:

Ուսումնական ընթերցող Պօլսոյ Ազգ. Ըրազդաց մէջ, զի բազմաճառ և հնագէտ Պ. Մօրթման Գերմանացին յաղագած է քսան և վեց տարի անխոնջ աշխատութենէն զինի գտանել Վանայ և այլոց տեղեաց մէջ եղած սեպածե տառիք արձանագրութեանց բանալիքը, որով և ընթեռնել նոյն արձանագրութիւնքը:

Ինծայոյս եմք Աբարատ ամառադրոյս միջոցաւ հրատարակեալ սեպատառ արձանագրութեանց լուծումը ստանալ ի նոյն Պ. Մօրթմանէ, և հաղորդել մերազնեից: Ըստ խնդրանաց նորին, Աբարատ արձանագրութիւնքը լուսանկարած յղած եմք ինքեան:

Վանայ արձանագրութեանց լուծման առթիւ յիշեալ հնագէտ պարսկէն յընթերցարանն Յունաց Ս. Պօլսոյ համառօտ խմբաւոր տեղեկարարութիւնը, զոր Ս. Պօլսոյ ազգայիններէն Պ. Իմանուէլ Եսայեան համառօտագրած և հրատարակած է տեղւոյն Աբարատ Ըրազդի միջոցաւ, ստորեւ կը հաղորդեմք մերազնեից կողմանցս:

ՏՕՔԹԷՕՐ ՄՈՐԹՄԱՆ

ԵՒ ՎԱՆԱՅ ՍԵՊԱՏԵՒ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Գեկտեմբեր ամսոյս 13/25ին, ինչպէս որ Լէվանդ Հերալտ մայրաքաղաքիս օրագիրը կանխաւ ծանուցեր էր, (Թերևս ուրիշ Թերթեր ալ) Բերա Յունաց Քլիւպը՝ հրաւեր մը կարդաց քաղաքիս լուսաւորեալ և ուսումնասէր հասարակութեան, բոլոր Եւրոպիոյ մէջ իւր անհուն հմտութեամբը աշխարհածանօթ՝ մեծանուն Տօրթէօն Մօրթմանի իմաստասիրական մակացութեանց վարդապետի ձեռքը՝ այնքան դարերէ ի վեր անընթեռնելի մնացած Վանայ սեպածե արձանագրութեանց լուծումը աւետելով: Այս մեր սրտառու յիշատակաց և Հայութեան խանձարոց բնագաւառ՝ երբեմն երկրաւոր դրախտին՝ այժմ կառավարութեան անձեռնհասութենէն, անօրէն և վարագասուն Քիւրտերու ձեռքը մնալով՝ զժպտի արիւնհեղութեանց, կրօնի և ազգութեան դէմ անընդհատ խռշտանցաց, կուսից առեւանգութեանց և քստմենելի ոճրագործութեանց հանդիսարան եղած Վանայ շնաշխարհիկ բարձրաւանդակին համար եղած հրաւերքին՝ ճշմարիտ Հայու մը սիրտը չէր կրնար չիբաբախել: Այս սխալի գաւառը զոր սահմանակից Տուրքերան աշխարհին հետ միասին առնելով, բուն իսկ Հայկարան կրոնամք կոչել՝ մեր դիւցախառն նահապետին շահատակութեանց ասպարէզ և իրեն ու որդւոց և թոռանցը բնակարան լինելով իւր Հայկաշէնի, Աստուածաշէնի, Գերեզմանաց բլրոց, Բէլուայ, Տշողի, Նմրուտայ հանդիսավայրօք և յետոյ մեր Արայի Գեղեցիկ տարփածու աշխարհամագուհւոյն Համիրամակերտի շինութեամբ ճոխացեալ ինչպէս որ ի զրոց և յաւանգութեանց գիտելիք մինչև այս օրս, այն աշխարհը որ յետ բազմադիմի և յարափոփոխ յաջող դիպաց և ձախող արծակից, միշին դարու ժամանակ՝ Արծրունի Վասպուրական թագաւորաց նախնիներէն միմեանց գեղեցիկ յօրինուածներովը և անկից առաջ ալ Արտաշէս Բ.ի օրերով Արտիմետի հրաշանք կար շինուածներովը մեր ազգային պատմութեան ամենէն բանաստեղծական դարու թագաւորին և արքունեաց ու Սաթրնկան գլխոյի դարպասներով զարդարուած, և յետոյ ժամանակաւ Թաթարաց արշաւանքին առջև Սենեքերիմայ Արծրունեաց թագաւորին չարխորհուրդ դաղթականութեամբն ի Սերաստիա 800,000 հոգովք արանց և կանանց՝ անապատացած, մինչև հիմայ բաղմացել Քրդաց «տէրէպէյիներու», աւաղակաց որջ ու կաղաղ դարձած ըլլալովը հանդերձ դարձեալ հարստահարեալ, նեղեալ, վշտացեալ բազմաչար Հայութեան բուն իսկ այժմեան Քիւրտիստանու և հին Վորդուաց ու Մոկաց քարայրներուն բերանը՝ վերջին պատուար և սահման հանդիսացած կը կենայ:

Վարձեն չուզիր Հայութիւնը անկից ասդին վերջ տնիլ, չի կրնար մոռնալ այն Հայոց ձորը՝ ուր իր 4000 տարուան ազգի նախահայրքը արիւնին թափեր են՝ իրենց որդւոց և թոռանց անկախութեան համար, չի կրնար հրաժարիլ այդ նուիրական ափունքներէն՝ ուր հազար ու մէկ յիշատակներ շուրջ կը պարփակեն այդ հրաշալի ծովակը, իբրեւ թագն պարծանաց Հայութեան։ Ոշտունիք, Բզնունիք, Խորխոռունիք և Գնունիք ծովուն շրջակայքը բռնող մէյ մէկ նախարարութիւններ՝ որոնց իւրաքանչիւրը զանազան պաշտօններ կը վարէին Հայոց թագաւորութեան երջանիկ օրերով և որոնց ամենուն վրայ արքայաբար իմն նազէր գահերէց իշխանապետն Վանայ կամ ինչպէս որ հին արձանագիրը կըսէ՝ «Տէրն շնորհալի և շքեղ քաղաքին Տոսպայ», որուն աւանդով կը կոչուէր գաւառը և գաւառին անուամբ քաղաքը, և որ էր մայր քաղաքաց բոլոր Վասպուրական աշխարհի, կամ ինչպէս որ արձանագրաց մէջ կը կոչուի Պուսպարուկ աշխարհի՝ որն որ ընդարձակագոյնն է Հայոց մեծաց հնգետասան նահանգաց մէջ, և որուն գահապար մը ունենալու համար համառօտ բոկով միանգամայն և դիւրահասկանալի անոնց որ ցանկացող լիալ են մեզի պէս ղեկերիլ հայրենի սահմանները, գէթ աշխարհացոյց տախտակներու վրայէն իրենց կարօտը առնելով, և ուրիշներուն այսչափս անգամ աւելորդ, իւր ծոցը կամփոխէ Վանայ ծովէն ջրամբարին հետ գրեթէ ամբողջ հայրենոտոգ Երասխայ՝ Հայկական Հունտոյ՝ հարաւային աւազանը, որ է ըսել երկայնութիւնը Վանայ ծովէն մինչև Վասրից ծովուն խիստ մօտաւոր ջրբաժին լեռները, և լայնութիւնը Մասեաց ոտքէն և Երասխ գետէն վար Վարայրի սուրբ նշխարաց դաշտէն իջնելով Երասխայ և Վանայ բարձրաւանդակին ու Տիգրիսի և Արմիա լճին ջրբաժին լեռները։ Ասոր վրայ եթէ յաւելուէր ըստ մասին ինչ որ Վասպուրական թագաւորաց Երծրունեաց հարստութեան օրերով իրենց իշխանութեան սահմանները ընդարձակած են հարաւային Մոկաց և Կորդուաց աշխարհքներու՝ և մասամբ իրենց ազգակից ի Սանասարայ սերնդոց Աշճնեաց բղջխութեան գաւառաց վրայ, անտեղի չըլլար կարծելը բազմաջրմուտ Մորթմանի հետ նոյն իսկ այն հին արձանագրին ժամանակները Կուր Երասխայ մէջ պարփակեալ Վերին Հայոց թագաւորութենէն զատ և որոշ Ստորին Հայոց ինքուրոյն մասնական թագաւորութիւն մը եղած ըլլալ՝ մայրաքաղաք ունենալով զՎանտոսպ, թէպէտ և մեզի աւելի հաւանական կերեայ, գուցէ ժամանակ մը, թերեւս աւելի մերձաւոր ըլլալու համար Ասորեստանայց և Բաբելոնացոց ժամանակակից հզօր պետութեանց, քիչ շատ անոնցմէ կախում կամ վերաբերութիւն ունենալուն հետեւին՝ հոն փոխած ըլլան իրենց աթոռը Հայկազանց նահապետներէն ոմանք, նա մանաւանդ որ արձանագրութեանց անուանքն

ալ իրենց կը պատշաճին ինչպէս կստուգաբանէ բազմաբղիւն Մորթման, զոր և փութանք տեսնելու։

Ժամը զիշերուան 3 1—2 էր գրեթէ 33—40ի չափ ազգայինք գրեթէ նոյնչափ ալ Յոյնք իրենց Գլխաւոր ժողովուած էինք երբ պատկանելի ծնունին ընդարձակ սեղանատախտակի մը վրայ տառածելով մի առ մի այդ անիմանալի և մոզական բեւեռածէ նշանագիրները՝ ինքն ալ մոզի մը պէտքար և նման անոնց գլուխը անցած, Գլխալին աւտենապիրը նախորդ նիստին արձանագրութիւնը ընթեռնէն վերջը, երբ աւտենապետը Բարաբանօ էֆէնտի Տօթթէօր Մորթմանին դառնալով՝ խօսքը ձերն է ըսաւ, այն ժամանակ բեմին վրայ կանգնած իմաստուն ծերունին սկսաւ խօսիլ ինչ որ մէկը ի սէր ազգիս և ազգակցացս համառօտագրեցինք առ ժամայն։ Նախ և առաջ հասարակութեան իմացուց որ ինչ որ ըստ ինքեան այս բազմաշխատ գործին վերաբերեալ 26 տարուան միջոցին մէջ խուզարկութիւններ ըրած էր, ըսա իւր պարտականութեան Պէոլիսի արեւելեան ընկերութեան յուզարկած էր հոն հրատարակուելու համար, բայց միանգամայն արտօնութիւն մը առած ըլլալով ո և իցէ տեղ և երբոր կամենար համառօտութիւն մը բերանացի ճառախօսութեամբ և կամ տպագրութեամբ ի լոյս ընծայել, ըստ այնմ իր լեզուաւը այսինքն Գերմաներէն «Իքզիմէ», համառօտութիւն մը ըրած էր այս պատկառելի ակմբին ներկայացնելու դիտմամբ, բայց խրատեալ Ֆրանսէրէնի զայդ վերածել ամենուն դիւրահասկանալի ըլլալու համար, թարգմանութիւնը չէր կորցած ամբողջացնել՝ ներկայ նիստին հասցնելու, երկրորդ նիստի մը որ դարձեալ կանխաւ պիտի ծանուցուէր օրագրաց միջոցաւ՝ կը խօստանար զայն գրով ներկայացնել, ներումն խնդրելով առ ժամս բերանացի կիսկատար հտորոգելուն։

1828ին ըսաւ երբ Սէնմարգէն առաջին անգամ Հայաստանի և Հայոց ազգին վրայ իր երկհատոր գրութիւնը հրատարակեց, այս ազգին վրայ փոքր ի շատէ տեղեկութիւն տալով Եւրոպիոյ իւր պատկառելի հնութեանք, իր պատմութեան անցեալ և ներկայ փիճակին վրայ խորհրդածելով, միանգամայն թեղադրեց Ֆրանսիայի իմաստնոց ճնմարանին որ ըստ ինքեան կարժէր մասնաւոր գիտնական ճամբորդ մը հանել Հայաստան՝ հետազոտելու այդ ազգին հնութիւնները, մնացեալ արձանագրութիւնները օրինակելու և լուծելու և ըն։

(Սեպտեմբեր 1 յետագային)